

TATEVIK ROSTOMYAN

ECONOMIC GROWTH AND CHANGES IN THE STRUCTURE OF THE SECTORAL ECONOMY OF ARMENIA IN 2005-2017

Key words: branch structure, branches of economy, construction, high quality economic growth, main branches, branch deformation.

In the article we presented the structural changes of the RA economy and the movement of the main branches of economic growth in 2005-2017. It was revealed that in 2008-2009, as a result of the financial and economic crisis, the structure of the Armenian economy has not been diversified, so the consequences of the crisis have been deeply displayed. The construction sector, with the largest share of GDP, is now yielding its place to the sectors of services and industry.

ԱՐՄԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

*Մակրոտնտեսական քաղաքականություն և
կանխարեսում, բակալավրիատ, 4-րդ կուրս*


ԻՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔԻ ԵՎ ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՊԸ

Հիմնաբառեր. իրական փոխարժեք, արտահանում, ներմուծում, էկոնոմետրիկ մոդել, գնահատում

Կարևորելով իրական փոխարժեքի՝ որպես տնտեսության կարգավորման գործիքի դերը՝ հոդվածում բացահայտվել և էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ գնահատվել է իրական արդյունավետ փոխարժեքի և արտահանման ու ներմուծման կապը:

Մինչդեռ ժամային շրջանում ՀՀ երկնիշ տնտեսական աճի տեմպը գերազանցապես ձևավորվել էր մի քանի ոչ արտահանելի արտադրությունների և արտերկրից ստացվող դրամական փոխանցումների աջակցության հիման վրա: Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը բացահայտեց ՀՀ տնտեսությունում առկա «մակրոտնտեսական հիվանդությունները»: Դրանք են՝ տնտեսական աճի ոչ կայուն շարժիչ ուժերը, արտահանման սահմանափակ և հիմնականում հումքային ռեսուրսներով գերիշխող կառուցվածքը, մասնավոր տրանսֆերտներից բավականին մեծ կախվածությունը¹: Հետևաբար, այսօր տնտեսության հիմնական խնդիրներն առնչվում են ոչ մրցունակ և ցածր արտադրողական, հաճախ իներցիոն բնույթ կրող գործունեության անկման, մրցունակ արտադրանք թողարկելու, միջազգային շուկաներ ներթափանցելու ու ձեռնարկատիրական կարողություններն ընդլայնելու դժվարությունների և արգելքների հետ:

¹ Տե՛ս Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2009, Նորարարության էկոհամակարգի սերմանումը, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2009, էջ 40:



Գծապատկեր 1. Իրական արդյունավետ փոխարժեքի և արտահանման ու ներմուծման շարժընթացը 2007-2017 թթ.(%)¹

ՀՀ տնտեսությունը, դեռևս չունենալով համակողմանի զարգացած ֆինանսական շուկա, որը կկարողանար ամբողջությամբ կլանել ներքին և արտաքին ցնցումները, դրանց արձագանքում է փոխարժեքի տատանումներով, հետևաբար՝ փոխարժեքը դարձել է արտաքին զարգացումների և շուկերի փոխանցման գլխավոր միջոց:

Իրական արդյունավետ փոխարժեքի (ԻԱՓ) համաթիվը (ինդեքս) տվյալ երկրի հիմնական առևտրային գործընկեր երկրների փոխարժեքների միջինացված շարժընթացը բնութագրող առանցքային ցուցիչն է և կարող է հիմք լինել դրանց ուղղվածության և հետագա աճի միտումների կանխորոշման համար:

2007 թ. իրական արդյունավետ փոխարժեքը, նախորդ տարվա համեմատ, արժևորվել է 12.88%-ով, ներմուծման ծավալներն աճել են 49.1%-ով, իսկ արտահանման ծավալները՝ 17.1%-ով:

Իրական արդյունավետ փոխարժեքի արժևորման գործընթացը շարունակվել է նաև 2008 թ.՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 6.6%-ով: Ներմուծումն աճել է 35.4%-ով և կազմել 4.4 մլրդ դոլար, իսկ արտահանումը նվազել է 7.2%-ով՝ կազմելով 1.1 մլրդ դոլար: Նվազմանը նպաստել են 2 ապրանքախմբեր՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր»: Ներմուծման աճի և արտահանման նվազման պարագայում 2008 թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդը, 2007 թ. համեմատ, ավելացել է մոտ 65%-ով և կազմել 2.6 մլրդ դոլար:

Չնայած իրական արդյունավետ փոխարժեքի 6%-ով արժեզրկմանը՝ 2009 թ. արտահանման ծավալները կրճատվել են 32.8%-ով՝ 2008 թ. 1057.2 մլն դոլարի փոխարեն կազմելով 710.1 մլն դոլար՝ պայմանավորված արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսևորման ժամանակային խզմամբ, իսկ ներմուծման ծավալները նվազել են շուրջ 25%-ով՝ 2008 թ. 4426.1 մլն դոլարի փոխարեն կազմելով 3321.1 մլն դոլար՝ պայմանավորված բնակչության

¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» 2007-2017թթ., ՀՀ ԿԲ, <https://databank.cba.am/ActivitiesGrid.aspx>

տնօրինվող եկամուտների նվազմամբ: 2009 թ. արտաքին առևտրաշրջանառությունը, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, նվազել է 26.5%-ով, իսկ զուտ արտահանումը՝ 29.0%-ով:

2010 թ., նախորդ տարվա համեմատ, իրական արդյունավետ փոխարժեքն արժևորվել է 0.51%-ով, արտահանման ծավալներն աճել են 46.6%-ով, իսկ ներմուծմանը՝ 12.9%-ով: Արտահանման ցուցանիշի բարելավումը հիմնականում պայմանավորված էր համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, արտահանվող ապրանքների գնային մրցունակության բարձրացմամբ, նախորդ տարիներին կառավարության հակաճգնաժամային գործողությունների շրջանակներում արտահանողներին ցուցաբերած ֆինանսական և ոչ ֆինանսական աջակցության ծրագրերի իրականացմամբ: 2010 թ., նախորդ տարվա համեմատ, առևտրային հաշվեկշռի պակասուրդն աճել է 160.5 մլն դոլարով և կազմել 2771.4 մլն դոլար, իսկ ընթացիկ հաշիվը բարելավվել է՝ կազմելով ՀՆԱ շուրջ 14.0%-ը՝ նախորդ տարվա 16.2%-ի փոխարեն:

2011 թ. իրական արդյունավետ փոխարժեքը, նախորդ տարվա նկատմամբ, արժեզրկվել է 0.93%-ով: Ներմուծման աճը, նախորդ տարվա համեմատ, նվազել է՝ կազմելով 10.6%, իսկ արտահանումն աճել է 28.2%-ով՝ կազմելով 1334.3 մլն դոլար՝ նախորդ տարվա 1041.1-ի փոխարեն: Ներմուծման նկատմամբ արտահանման ավելի մեծ աճի արդյունքում զուտ արտահանումը, նախորդ ժամանակահատվածի համեմատ, աճել է ընդամենը 3.8%-ով:

2012 թ. իրական արդյունավետ փոխարժեքը, 2011 թ. համեմատ, արժեզրկվել է 4.37%-ով: Արժեզրկման գործընթացը հատկապես արագացել է երկրորդ եռամսյակից, երբ նախորդ եռամսյակի նկատմամբ արժեզրկումը կազմել է 5.7%: Արդյունքում արտահանման աճի տեմպը գերազանցել է ներմուծման աճի տեմպը. արտահանումն աճել է 3.4%-ով՝ կազմելով 1380.2 մլն դոլար, իսկ ներմուծումն աճել է 2.8%-ով՝ կազմելով 4261.2 մլն դոլար¹՝ նպաստելով զուտ արտահանման 2.5% աճին:

2013 թ. իրական արդյունավետ փոխարժեքը, նախորդ տարվա նկատմամբ, արժևորվել է 1.54%-ով, ներմուծման ծավալների աճը կազմել է 2.9%, իսկ արտահանումն աճել է 7.1%-ով: 2014 թ. ԻԱՓ-ն արժևորվել է 7.09%-ով: Վերջինս բացասաբար է անդրադարձել արտահանման աճի տեմպի վրա, որը կազմել է 4.6%: Նկատվել է ներմուծման աճի դանդաղում՝ նախորդ տարվա նկատմամբ կազմելով 0.9%՝ հիմնականում պայմանավորված երկրորդային եկամուտների՝ զուտ ընթացիկ տրանսֆերտների և աշխատողների վարձատրության զուտ ներհոսքի կրճատման հաշվին բնակչության տնօրինվող եկամուտների նվազմամբ:

ՀՀ-ում իրական արդյունավետ փոխարժեքի և առևտրային հաշվեկշռի կապը գնահատելու համար էկոնոմետրիկ մոդելի օգնությամբ կատարվել է ռեգրեսիոն վերլուծություն², որի արդյունքները փաստում են, որ 1997–2014 թթ. իրական արդյունավետ փոխարժեքի 1% արժևորման դեպքում առևտրային հաշվեկշռի պակասուրդը խորանում է 4.78%-ով, իսկ արժե-

¹ Ներմուծման աճը պայմանավորվել է ներքին տնտեսության ակտիվության և բնակչության եկամուտների աճով:

² Տե՛ս Մխիթարյան Լ.Կ., «Իրական փոխարժեքը և ՀՀ արտահանման ու ներմուծման կառուցվածքի փոփոխությունները», «Բանբեր ՀՊՏՀ» թիվ 3(39), «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան 2015, էջ 94:

գրկման դեպքում նույն չափով կրճատվում է: Դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1 տոկոսային կետով ավելացումը 1 եռամսյակ անց հանգեցնում է հանքահումքային արտադրանքի արտահանման 2.55, պատրաստի սննդի արտադրանքի արտահանման 1.18, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, մետաղների արտադրանքի արտահանման 1.85, ոչ թանկարժեք մետաղների արտահանման 0.34 տոկոսային կետով նվազման:

2015 թ. իրական արդյունավետ փոխարժեքն արժևորվել է 6.37%-ով, ընդ որում՝ առավել մեծ՝ 11.12% արժևորում արձանագրվել է առաջին եռամսյակում, իսկ հաջորդ եռամսյակներում իրական արդյունավետ փոխարժեքները, առաջին եռամսյակի համեմատ, մնացել են արժեզրկված: Ներմուծումը նվազել է 26.5%-ով՝ կազմելով 3254 մլն դոլար՝ պայմանավորված դրամական փոխանցումների կրճատման արդյունքում ներքին պահանջարկի կրճատմամբ, ինչպես նաև դոլարի 14.9% արժևորման հետևանքով ներմուծման գների աճով: Արտահանումը կրճատվել է 3.9%-ով և կազմել 1486.9 մլն դոլար: Նման անկումը հիմնականում պայմանավորված էր հայրենական արտադրության ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի կրճատմամբ: Արդյունքում, 2015 թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը նվազել է 20.6%-ով, իսկ զուտ արտահանումը բարելավվել է 38.6%-ով:

2016 թ. իրական արդյունավետ փոխարժեքն արժեզրկվել է 0.61%-ով, արտահանումն աճել է 20.63%-ով, ներմուծումը՝ 1.1%-ով՝ կազմելով 3273.5 մլն դոլար: Արտահանման առաջանցիկ աճի արդյունքում առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա համեմատ, նվազել է 20.4 տոկոսային կետով՝ կազմելով 944.4 մլն դոլար: 2016 թ. ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 2.7%՝ նախորդ տարվա 2.6%-ի փոխարեն: Ընթացիկ հաշվի բարելավման վրա իր դրական ազդեցությունն է ունեցել դրամական փոխանցումների ներհոսքի նվազման տեմպերի դանդաղումը: ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունն աճել է 7.2%-ով՝ կազմելով 5065.2 մլն դոլար, իսկ զուտ արտահանումը՝ 15.51%-ով:

2017 թ. իրական արդյունավետ փոխարժեքն արժեզրկվել է 4.58%-ով: Նույն թվականի առաջին կիսամյակում ընթացիկ հաշվի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, բարելավվել է՝ կազմելով 89.8 մլն դոլար: Ներմուծման ծավալներն աճել են 27.77%-ով՝ կազմելով 4182.7 մլն դոլար: Արտահանման աճի տեմպը կազմել է 25.18%: Արդյունքում արտաքին ապրանքաշրջանառությունը, նախորդ տարվա համեմատ, աճել է 26.86%-ով՝ կազմելով 6425.6 մլն դոլար (տե՛ս հավելված 2):

Իրական արդյունավետ փոխարժեքի և արտահանման ու ներմուծման կապը հիմնավորելու նպատակով էկոնոմետրիկ մոդելի օգնությամբ կատարվել է ռեգրեսիոն վերլուծություն¹ (եռամսյակային տվյալները՝ հավելված 1-ում):

¹ Վերլուծության համար հիմք են հանդիսացել արտահանման ու ներմուծման և իրական արդյունավետ փոխարժեքի 2007-2017 թթ. եռամսյակային տվյալները: Հաշվարկները կատարվել են Eviews10 ծրագրային փաթեթի օգնությամբ:

Աղյուսակ 1

Արտահանման և ԻԱՓ կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման
գնահատման արդյունքները $EXPORT = -0.41REER(-1) + 10.71$

DependentVariable: EXPORT
Method: LeastSquares
Sample (adjusted): 2007Q1 2017Q3

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
DREER	-0.412608	0.846449	2.383614	0.0219
C	10.70766	4.543029	23.56944	0.0000
R-squared	0.121710	Meandependentvar		105.9158
Adjusted R-squared	0.100288	S.D. dependentvar		31.22613
S.E. of regression	29.61897	Akaikeinfocriterion		9.660102
Sumsquaredresid	35968.61	Schwarzcriterion		9.742019
Loglikelihood	-205.6922	Hannan-Quinncrier.		9.690310
F-statistic	5.681617	Durbin-Watsonstat		1.259861
Prob(F-statistic)	0.021857			

Աղյուսակ 2

Ներմուծման և ԻԱՓ կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարման
գնահատման արդյունքները $IMPORT = 0.74REER(-2) + 10.2$

Dependent Variable: IMPORT
Method: Least Squares
Sample (adjusted): 2007Q1 2017Q1

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
DREER	0.735774	0.426035	1.727025	0.0921
C	10.19772	2.335947	43.65563	0.0000
R-squared	0.071044	Mean dependent var		101.5837
Adjusted R-squared	0.047225	S.D. dependent var		15.25047
S.E. of regression	14.88602	Akaike info criterion		8.286272
Sum squared resid	8642.145	Schwarz criterion		8.369861
Log likelihood	-167.8686	Hannan-Quinn criter.		8.316710
F-statistic	2.982615	Durbin-Watson stat		2.297413
Prob(F-statistic)	0.092077			

Մշակված մոդելների արդյունքները ցույց են տալիս, որ իրական արդյու-
նավետ փոխարժեքի միավոր տոկոսային կետով արժևորումը 2 եռամսյակ
հետո հանգեցնում է ներմուծման 0.74 միավոր տոկոսային կետով ավելաց-
ման, իսկ արտահանման դեպքում միավոր տոկոսային կետով արժևորումը 1

եռամսյակ անց հանգեցնում է արտահանման 0.41 միավոր տոկոսային կետով կրճատման (տե՛ս աղյուսակ 1¹, աղյուսակ 2²):

Այսպիսով, ՀՀ արտահանման ու ներմուծման վիճակագրությունը փաստում է, որ իրական արդյունավետ փոխարժեքի և արտահանման ու ներմուծման կապը համապատասխանում է տնտեսագիտության տեսական դրույթներին. ՀՀ-ում ներմուծման և իրական արդյունավետ փոխարժեքի կապը դրական է, իսկ արտահանման և իրական արդյունավետ փոխարժեքի կապը՝ բացասական: ՀՀ արտահանման ու ներմուծման կառուցվածքների վերլուծությունից կարող ենք փաստել, որ արտաքին առևտրում առկա են բազմաթիվ խնդիրներ՝ կապված արտահանվող և ներմուծվող ապրանքների ծավալների, ապրանքախմբերի կենտրոնացվածության, առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի, արտաքին առևտրաշրջանառության ոչ սիմետրիկ կառուցվածքի հետ: Մյուս կողմից, ՀՀ-ն աշխատանքի միջազգային բաժանման մեջ տեղաշարժված է դեպի ռեսուրսաարդյունահանող տեխնոլոգիաներ: Ուստի կարծում ենք, որ չափավոր «թույլ դրամի» քաղաքականությունը (դրամի թույլ չափով արժեզրկումը) կարճաժամկետ հատվածում կնպաստի նշված հիմնախնդիրների լուծմանը:

Հավելված 1

Իրական արդյունավետ փոխարժեքը և արտահանումն ու ներմուծումը 2007-2017 թթ.³

Տարեթիվ	Իրական արդյունավետ փոխարժեք, համաթիվ	Արտահանում	Ներմուծում
31.03.2007	128,53	231,24	643,81
30.06.2007	127,69	293,85	715,91
30.09.2007	125,54	303,84	826,79
31.12.2007	132,22	323,37	1081,28
31.03.2008	135,74	233,96	846,84
30.06.2008	133,38	285,96	1055,22
30.09.2008	132,79	302,11	1220,24
31.12.2008	146,01	235,13	1303,84
31.03.2009	147,83	123,9	665,33
30.06.2009	128,99	160,21	719,98
30.09.2009	121,7	205,91	861,93
31.12.2009	116,52	220,14	1073,9
31.03.2010	123,33	199,51	800,05
30.06.2010	129,36	260,71	906,53
30.09.2010	132,55	265,97	953,25
31.12.2010	132,43	314,87	1089,12
31.03.2011	135,07	262,36	869,59
30.06.2011	126,24	340,73	1021,53

¹ Որտեղ՝ EXPORT՝ արտահանման աճի համաթիվ, (-1)՝ լազ (համապատասխան ցուցանիշի նախորդ եռամսյակի արժեք): Մոդելի մշակման ժամանակ կիրառվել է փոքրագույն քառակուսիների մեթոդը, իսկ ռեգրեսիայի որակի գնահատման համար հիմք են հանդիսացել R2 դետերմինացման գործակիցը, ռեգրեսիայի ստանդարտ սխալը: Գնահատված պարամետրերի վիճակագրական նշանակալիությունը ստուգելու համար հիմք են հանդիսացել ստուդենտի բաշխման t-վիճակագրի արժեքները:

² Որտեղ՝ IMPORT՝ ներմուծման աճի համաթիվ, (-1)՝ լազ (համապատասխան ցուցանիշի նախորդ եռամսյակի արժեք):

³ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Տվյալների բանկ, <https://www.cba.am/am/SitePages/statdatabank1.aspx>:

30.09.2011	124,79	370,23	1083,47
31.12.2011	126,58	361,03	1170,74
31.03.2012	129,95	299,69	952,92
30.06.2012	122,56	337,11	1060,7
30.09.2012	118,42	347,84	990,87
31.12.2012	119,53	395,56	1256,74
31.03.2013	121,78	342,23	990,18
30.06.2013	120,59	358,65	1004,43
30.09.2013	127,74	387,43	1056,52
31.12.2013	127,92	390,43	1334,73
31.03.2014	132,01	345,02	1002,67
30.06.2014	130,05	358,46	1046,38
30.09.2014	131,67	402,19	1169,2
31.12.2014	139,62	441,62	1206,17
31.03.2015	146,89	299,21	729,48
30.06.2015	138,68	399,46	783,92
30.09.2015	139,28	382,83	800,08
31.12.2015	142,65	403,84	925,75
31.03.2016	147,49	382,18	673,35
30.06.2016	140,66	439,44	774,67
30.09.2016	136,47	476,76	842,04
31.12.2016	139,66	493,35	983,41
31.03.2017	140,32	444,46	805,23
30.06.2017	136,02	546,94	1009,35
30.09.2017	129,62	606,65	1057,11
31.12.2017	132,05	644,83	1310,97

Հավելված 2

Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը: Արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ապրանքային բաժինների¹ (հազար դոլար)

	Արտահանում			Ներմուծում		
	2017 թ. հունվար-փետրվար	2018 թ. հունվար-փետրվար	աճի տեմպը, %	2017 թ. հունվար-փետրվար	2018 թ. հունվար-փետրվար	աճի տեմպը, %
Ընդամենը	274475.8	386898.7	141.0	492562.1	711492.7	144.4
այդ թվում՝						
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	3 633.6	5 066.2	139.4	14 651.5	18 088.9	123.5
բուսական ծագման արտադրանք	6 511.5	8 436.6	129.6	22 896.9	32 618.5	142.5
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	8.8	24.3	2.8 անգ.	6093.9	5955.0	97.7
պատրաստի սննդի արտադրանք	64 783.4	79 535.0	122.8	36 800.0	52 894.8	143.7
հանքահումքային արտադրանք	84 532.5	117 057.5	138.5	121 064.6	125 636.9	103.8
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	3 554.3	4 211.1	118.5	41 322.9	60 228.2	145.8

¹ Տե՛ս ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-փետրվարին», էջ 83, http://www.armstat.am/file/article/sv_02_18a_411.pdf:

պլաստմասսայե և դրանից պատրաստված իրեր, կառույց և ռետինե իրեր	763.2 1	761.2	2.3 անգ.	16 411.8	25 858.9	157.6
կաշվի հոմք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	1 864.3	2 952.1	158.3	2 131.1	3 141.4	147.4
փայտ և փայտյա իրեր	231.3	220.3	95.2	5 728.5	6 258.1	109.2
թուղթ և թղթից իրեր	87.6	186.4	2.1 անգ.	10236.0	12222.0	116.4
մանածագործական իրեր	13 373.4	30 147.8	2.3 անգ.	36 522.2	42 511.0	116.4
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	406.6	591.5	145.5	6 622.7	7 422.7	112.1
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	1 421.9	1 813.2	127.5	11 252.2	12 717.3	113.0
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	41 622.3	61 240.8	147.1	35 262.1	54 139.7	153.5
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	39 593.2	56 205.5	142.0	28 728.9	49 298.3	171.6
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	4 265.8	6 849.8	160.6	62 685.2	117 454.7	187.4
սարքեր և ապարատներ	4 398.5	4 541.5	103.3	8 348.9	22 662.5	2.7 անգ.
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	1 281.4	3 227.8	2.5 անգ.	15 339.9	47 246.2	3.1 անգ.
տարրեր արդյունաբերական ապրանքներ	1 932.3	2 767.8	143.2	10 327.8	15 130.7	146.5
արվեստի ստեղծագործություններ	209.9	62.2	29.6	134.7	6.8	5.0

АРМИНЕ СААКЯН
СВЯЗЬ РЕАЛЬНОГО ЭФФЕКТИВНОГО ОБМЕННОГО КУРСА И
ЭКСПОРТА И ИМПОРТА В РА

Ключевые слова: реальный обменный курс, экспорт, импорт, эконометрическая модель, оценка.

Учитывая роль реального обменного курса как инструмент регулирования экономики, в статье раскрывалось и с помощью эконометрических моделей оценивалось связь реального эффективного обменного курса и экспорта и импорта в РА.

ARMINE SAHAKYAN
THE CONNECTION BETWEEN THE REAL EFFECTIVE EXCHANGE RATE AND
IMPORT AND EXPORT OF RA

Key words: real exchange rate, export, import, econometric model, valuation.

Considering the role of the real exchange rate as instrument of econmic regulation in the article is revealed and evaluated with econometric models connection between the real effective exchange rate and export and import of RA.